

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2019-2020 ուս. տարվա  
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

15 նոյեմբերի 2019թ.

**Ներկա էին՝** գիտխորհրդի 24 անդամներից 17-ը (ներկայաթերթիկը կցված է):

**Նախագահ՝** ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սադյան

**Գիտական քարտուղար՝** ք.գ.թ. Ա. Դադայան

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝**

1. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնում համատեղությամբ դասավանդող դ.գ.թ. Ալբերտ Եփրեմի Սահակյանի դոցենտի կոչում ստանալու գործընթացը սկսելու հարցը:  
**Զեկուցող՝ Ա. Սադյան**
2. ԺԴ.00.14 - «Դեղաբանություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Սոնա Հայկազի Գրիգորյանի «Արիլամինոպրոպիոնաթթվի ածանցյալները՝ որպես ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղերի ստեղծման հեռանկարային աղբյուր» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի քննարկում և հաստատում:  
**Զեկուցող՝** Սոնա Հայկազի Գրիգորյան  
**Ղեկավար՝** դեղագործական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարինե Գառնիկի Բալասանյան
3. Ընթացիկ հարցեր:

## **ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝**

- 1. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Աննա Ֆելիքսի Մկրտչյանի դոցենտի կոչում ստանալու գործընթացը սկսելու հարցը:**

**Ելույթ ունեցան՝** Գիտական խորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սադյանը և գիտական քարտուղար, ք.գ.թ. Ա. Դադայանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ դոցենտի կոչման հավակնորդ Ա.Բ. Սահակյանի գիտամանկավարժական գործունեությունը, գիտական աստիճանը և աշխատանքային ստաժը բավարարում են ՀՀ ԲՈԿ-ի կողմից դոցենտի կոչման համար ներկայացվող պահանջներին:

Ա.Բ. Սահակյանը դասախոսություն է կարդում «Դեղագիտության կառավարում և էկոնոմիկա» առարկայից: Նա ղեկավարում է կուրսային և դիպլոմային աշխատանքներ, մագիստրոսական թեզեր: Ա. Սահակյանը հեղինակ է 27 գիտական հոդվածների, որոնցից 8-ը՝ ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի հանդեսներում և դեղերի շրջանառության ոլորտի վերաբերյալ շուրջ 25 նորմատիվային ակտերի: Վերջին երեք տարում հրատարակել է 3 գիտական հոդված և 1 ուսումնական ձեռնարկ (284 էջ):

Ա.Բ. Սահակյանի մասին կարծիք հայտնեցին Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ, կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ Ռ. Հովհաննեսյանը և ֆարմացիայի ինստիտուտի փոխտնօրեն ք.գ.թ. Ս. Վարդապետյանը: Նրանք նշեցին, որ Ա. Սահակյանը բացի մանկավարժական գործունեություն ծավալելը հանդիսանում է նաև Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի փոխտնօրենը, համահեղինակ է Դեղերի մասին ՀՀ օրենքի նախագծերի: Ելույթ ունեցողները նշեցին, որ Ա. Սահակյանը բարձրակարգ մանկավարժ է, լավ գիտնական է և արժանի է կրելու դոցենտի կոչում:

**Որոշեցին՝** Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ ք.գ.դ. Ռ. Հովհաննեսյան, անդամներ՝ ք.գ.թ. Հ. Սիմոնյան և Ա. Խաչատրյան:

Ընտրություններից հետո գիտական խորհուրդը (նիստին մասնակցում էին խորհրդի 24 անդամներից 17-ը) լսեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, համաձայն որի, փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել էին խորհրդի 17 անդամներ:

Ա.Ե. Սահակյանի դոցենտի կոչում շնորհելուն կողմ էր քվեարկել 16 անդամ, դեմ՝ 0, անվավեր էր՝ 1 քվեաթերթ:

Խորհուրդը բաց քվեարկությամբ հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և երաշխավորեց Ա.Ե. Սահակյանին՝ դոցենտի (ԺԵ.00.01- «Դեղագիտություն») կոչում ստանալու գործընթացը սկսելու համար:

**2. ԺԴ.00.14 - «Դեղաբանություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Սոնա Հայկազի Գրիգորյանի «Արիլամփնոպրոպիոնաթթվի ածանցյալները՝ որպես ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղերի ստեղծման հեռանկարային աղբյուր» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի քննարկում և հաստատում:**

**Լսեցին՝** Սոնա Գրիգորյանին, ով մանրամասն ներկայացրեց ատենախոսական աշխատանքը և պատասխանեց հարցերին:

**Ելույթ ունեցան՝** գիտխորհրդի նախագահ, ակադեմիկոս Ա. Սաղյանը, անդամներ՝ բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանը, բ.գ.դ. Ի. Մեկոյանը, կ.գ.թ. Ա. հովհաննիսյանը, ովքեր շնորհակալություն հայտնեցին ատենախոսին հետաքրքիր և բովանդակալից գեկուցման համար, ուղղեցին իրենց հարցերը և նշեցին դիտողությունները:

1. Ինչպես բխում է ատենախոսության անվանումից ուսումնասիրված միացությունների էֆեկտները ցանկալի կլիներ համեմատել լայն կիրառվող ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղերից մեկի, այսպես կոչված «*ոսկե ստանդարտի*» հետ:
2. Կատարվել է արդյո՞ք հետազոտվող միացությունների «Դոկինգ» վերլուծություն: Մասնավորապես, կա արդյո՞ք «Դոկինգ» վերլուծությամբ հետազայում այդ ամփնաթթուների շարքում ավելի ակտիվ միացության կառուցվածքի նախագծման, դրա հետագա սինթեզի և դեղաբանական ակտիվության բացահայտման նպատակ:

3. Աշխատանքում նշված է, որ հետազոտվող ամփնաթթուները (NPAA-34 և NPAA-36) *in vitro* պայմաններում ցուցաբերում են շատ թույլ արտահայտված ազդեցություն թրոմբոցիտների ագրեգացիոն գործընթացի վրա: Սակայն, հեղինակը ուսումնասիրել է ամփնաթթուների ազդեցությունը միայն թրոմբոցիտների ADP-ով մակածված արգրեգացիայի պայմաններում և հետևաբար չի բացառվում, որ ամփնաթթուները կարող են ցուցաբերել հակաագրեգանտային ակտիվություն ագրեգացիայի այլ ինդիկատորների կիրառման պայմաններում, օրինակ՝ կոլագենի:

Գիտխորհրդի նախագահ Ա. Սադյանը հավելեց նաև, որ ատենախոսական աշխատանքի վերնագիրը լիարժեք չի արտացոլում ուսումնասիրված նյութերի կառուցվածքային առանձնահատկությունները, քանի որ ուսումնասիրվել են ոչ միայն արիլամփնապրոպիոնաթթվի ածանցյալներ, այլ նաև կողքային ռադիկալում արիլ խումբ պարունակող ամփնապրոպիոնաթթվի այլ ածանցյալներ: Սակայն քանի որ դեղաբանական ակտիվությունների հետազոտությունների արդյունքները կորելացվում են ուսումնասիրված նյութերի բանաձևերի հետ, ուստի թեկնածուական ատենախոսության անվանման մեջ թույլ տրված վրիպումը կարելի է համարել ձևակերպման սխալ:

Սոնա Գրիգորյանը պատասխանեց հարցերին և նշեց, որ հնչած բոլոր դիտողությունները հաշվի կառնվեն և կկատարվեն համապատասխան շտկումներ:

Ելույթի համար Ա. Սադյանը ձայնը տվեց նաև գրախոս, բ.գ.դ. Ի. Սեկոյանին, ով ներկայացրեց Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի նախագիծը: Ի. Սեկոյանը նշեց, որ Սոնա Հայկազի Գրիգորյանի ատենախոսական աշխատանքը վերաբերում է արիլամփնապրոպիոնաթթվի ածանցյալները՝ որպես ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղերի ստեղծման հեռանկարային աղբյուր:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հետազոտությունների արդյունքում հեղինակի կողմից պարզաբանվել են՝

- 2-արիլպրոպիոնաթթվի ածանցյալներ հանդիսացող ոչ սպիտակուցային ամփնաթթուները (NPAA-34, NPAA-35, NPAA-36, NPAA-38) օժտված են հականոցիցեպտիվ և հակաբորբոքային ակտիվություններով,

- առավել բարձր ակտիվությամբ օժտված NPAA-34 և NPAA-36 միացությունները ցուցաբերում են բորբոքման օջախում մալոնային դիալդեհիդի մակարդակը իջեցնելու հատկություն,

- *in vitro* պայմաններում հետազոտվող ամինաթթուները (NPAA-34 և NPAA-36) խոչընդոտում են բորբոքման մարկերներ հանդիսացող և ՈՍՀԲԴ-երի կողմնակի ազդեցությունները պոտենցող ցիտոկինների ձերբագատումը,

- NPAA-34 և NPAA-36 ամինաթթուները *in vitro* պայմաններում ցուցաբերում են շատ թույլ արտահայտված ազդեցություն թրոմբոցիտների ագրեգացիոն գործընթացի վրա,

- նշված ամինաթթուների գրգռիչ ազդեցությունը ստամոքսի լորձաթաղանթի վրա 50 մգ/կգ դեղաչափով գրեթե բացակայում է, իսկ 100 մգ/կգ դեղաչափով ցուցաբերում է նվազագույն արտահայտվածություն:

Ի. Սեկոյանը նշեց, որ հետազոտողը ուսումնասիրել և հայտնաբերել է, որ ուսումնասիրված ոչ սպիտակուցային ամինաթթուները՝ բացահայտված հակաբորբոքային և հականոցիցեպտիվ հատկությունների և թույլ արտահայտված կողմնակի ազդեցությունների հետ մեկտեղ, կարող են հիմք հանդիսանալ առաջարկելու դրանց որպես հնարավորինս անվտանգ հակաբորբոքային և ցավազրկող դեղերի ստեղծման նոր աղբյուր: Բացահայտված և տարբեր բիոմարկերների որոշման հիման վրա հաստատված հակաօքսիդանտային ակտիվությունը թույլ է տալիս հեղինակին առաջարկելու ընդլայնել հետազոտված ամինաթթուների հնարավոր կիրառման ոլորտը: Ոչ սպիտակուցային ամինաթթուների օրինակով լրացուցիչ ամինախմբի առկայության պայմաններում ներկայացված դեղաբանական ազդեցության առանձնահատկությունները կարող են հիմք հանդիսանալ զարգացնելու նոր օրինաչափություն ՈՍՀԲԴ-երի արիլպրոպիոնաթթվի ածանցյալների կառույց-ակտիվություն կապի առկա դրույթներում:

Ելույթ ունեցողները նշեցին, որ արված դիտողություններն ամեննին չեն նսեմացնում ներկայացված ատենախոսության արժեքը և Սոնա Գրիգորյանի «Արիլամինոպրոպիոնաթթվի ածանցյալները՝ որպես ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղերի ստեղծման հեռանկարային աղբյուր» թեմայով դեղաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է, որը հիմնված է մեթոդաբանորեն ճշգրիտ ուրվագծված նպատակի, հետազոտման ժամանակակից եղանակների և վիճակագրորեն հավաստի տվյալների վրա: Մեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Ելնելով վերը շարադրվածից, անհրաժեշտ է նշել, որ ատենախոսությունն արդիական է, ունի տեսական և գործնական մեծ նշանակություն, ձևակերպված է գրագետ և հստակ: Այն իր ծավալով և բովանդակությամբ լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈՀ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հայցորդ Սոնա Հայկազի Գրիգորյանի արժանի է ԺԴ.00.14 «Դեղաբանություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ելույթ ունեցողներն առաջարկեցին հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի կողմից ներկայացված կարծիքը:

***Որոշեցին՝ (միաձայն)***

1. Հաստատել Սոնա Հայկազի Գրիգորյանի «Արիլամինոպրոպիոնաթթվի ածանցյալները՝ որպես ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղերի ստեղծման հեռանկարային աղբյուր» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի պաշտոնական կարծիքը:

### **3.Ընթացիկ հարցեր:**

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝  
տնօրենի պաշտոնակատար,  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սադյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան